ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԵՈՀԱՆ ԲԼԱՐԱՄԲԵՐԳԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ (1836-1841)

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Հոլանդական ծագումով գերմանացի, ռուսական բանակի հետեւազօրի զօրավար մի շարք կարեւոր ռազմական գործողութիւնների մասնակից Եոհան (Իւան) Ֆէոդորի Բլարամբերգը (ֆոն Բլարամաբերգ, 1800, Մայնի Ֆրանկֆուրտ–1878, Ղրիմ) սերունդներին է աւանդել իր յիշողութիւնները որտեղ պատմում է դէպի Արեւելք կատարած իր ճամփորդութիւնների մասին (1836–1840, 1841–1855) եւ արժէքաւոր տեղեկութիւններ հաղորդում Ասիայում Ռուսաստանի վարած քաղաքականութեան, տեղի մի շարք ժողովուրդների մասին: Յուշերի իր գիրքը առաջին անգամ լոյս է տեսել 1872ին, Բեռլինում, գերմաներէն[1]:

Նաեւ Հայաստանում ճանապարհորդած Բլարամբերգի գրքում միքանի տեղ յիշատակուած են մասնաւորապէս Ռուսաստանի եւ Իրանի հայերը: Հեղինակին գրաւել է հայ կանանց եւ երեխաների գեղեցկութիւնը, Արարատի հրաշափառութիւնը: Նա տուեալներ է հաղորդել նաեւ Իրանում հայ կանանց հետ ամուսնացած օտարազգի սպաների եւ այլ իրողութիւնների մասին: Ինչպէս ժամանակի շատ քրիստոնեայ ճանապարհորդներ՝ Բլարամբերգը եւս յաճախ գիշերել է հայերի տներում, եւ, սովոր լինելով ամէնուրեք հանդիպել հայերի, հարկ է համարել նշել, որ, օրինակ, Մաշհադում հայեր չեն ապրում...

Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք Եոհան Բլարամբերգի գրքի՝ հայ ժողովրդին եւ հայ իրականութեանը վերաբերող վկայութիւնները[2]:

Գլուխ Ա
1836 թուական

[*Աստրախանի մի պարահանդէսի նկարագրութեան մէջ*] Յստակօրէն գերիշխում էր հարաւային տիպը. 50 կամ 60 կանանց մէջ, որ հաւաքուել էին պարահանդէսին, տեսայ ընդամէնը մէկ հատիկ շիկահերի, բոլոր միւսները կրակոտ թխահերուհիներ էին՝ հրաշալի սեւ աչքերով, շքեղ մազերով եւ սադափէ ատամներով: Նրանց երակներով հոսում էր հայկական արիւն, քանի որ Աստրախանի բնակիչների մեծ մասը հայեր էին կամ ռուսների եւ հայերի խառնուրդներ (էջ 29):

Սեպտեմբերի 17ին՝ սրբուհի Սոֆիայի՝ զօրավարի տիկին Սոֆիա Տ.ի պահապան հրեշտակի օրը, վերջինիս ամուսինը կազմակերպել էր «զգեստաւորուած պարահանդէս», որին հրաւիրուել էր աստրախանեան հասարակութեան սերուցքը: Զարդարուած գեղեցիկ հայուհիները հիանալի տեսք ունէին[3], իսկ Նորայի զգեստը հագած երիտասարդ Կատերինա Տ.ն զմայլելի էր: Պարահանդէսը չափազանց աշխուժ էր: Հայկական եւ ռուսական պարերը փոխարինուեցին ֆրանսիական կադրիլներով[4] (էջ 33):

Դեկտեմբերի 21ին մենք շարժուեցինք Թերէքի[5] ձախ ափի երկայնքով՝ լայն, տեղ-տեղ թփուտներ աճած հարթավայրով, որտեղ յաճախ թաքնւում էին աւազակութիւն անող չեչէնները, որ կողոպտում էին ճանապարհորդներին եւ նրանց գերեվարում լեռները: ....Ուշ երեկոյեան հասանք Մոզդոկ ամրոցը[6] եւ երկար նեղութիւններից յետոյ օթեւան գտանք մի հարուստ հայի մօտ, որը մեզ տեղաւորեց իր միակ, շատ ընդարձակ ննջարանում, քանի որ միայն այդ սենեակն էր տաքացւում: Հայկական սովորութեամբ՝ մեզ համար յատակին փռեցին լայն ներքնակներ, եւ մենք դրանց վրայ քնեցինք առանց հանուելու: Յաջորդ օրն արթնանալով՝ տեսայ մի հաճելի ընտանեկան տեսարան. տանտիրոջ վեց երեխաները, 10ից 14 տարեկան, մեծ մասամբ՝ աղջիկներ, քնած էին այդ նոյն սենեակում, լայն ներքնակի վրայ, ծածկուած մէկ ծածկոցով: Արթնանալով՝ նրանք զարմանքով նայում էին օտար մարդկանց եւ այդ պահին նման էին ծիծեռնակի ձագերի, որոնք իրենց գլուխները դուրս են հանում բներից: Դրանք անուշիկ, գեղեցիկ գլուխներ էին. մեծ սեւ աչքեր, ուսերի վրայ թափուող ճիւթի պէս սեւ խոպոպներ, մաշկի գեղեցիկ երանգ եւ սադափէ ատամներ: Առհասարակ, հայերը մարդկանց գեղեցիկ տիպ ունեն, իսկ երիտասարդ աղջիկներն ու պատանիները պարզապէս հմայիչ են: Մենք շնորհակալութիւն յայտնեցինք սիրալիր տանտիրոջը հիւրընկալութեան համար, երեխաներին շաքար նուիրեցինք եւ ճամփայ ընկանք (էջ 35-36):

Մայիսի 8ին մեր բարեկամ ճարտարագէտ-գլխապետ Նիկոլայ Գորբաչեւսկիի անուանակոչութեան օրն էր: Նա զբօսախնջոյք կազմակերպեց Բալաբուր գեղատեսիլ հովտում, ամրոցից 7 կամ 8 վերստ[7] հեռաւորութեան վրայ: ....Ճաշի ընդմիջումներին դիտում էինք մի հայի պատկանող ամերիկեան ծխախոտի, անգլիական բամբակի եւ շաքարեղէգի տնկարանները: Տէրը մեզ տանում էր ամէնուր եւ պատմում էր իր տնկարանների մասին (էջ 47):

[*Աստրախանում*] Ես եւ Ֆելկնէրը տուն վարձեցինք մի հայի մօտ եւ յարմար տեղաւորուեցինք (էջ 82):

[*Թիֆլիսում*] Վիտկեւիչը, Իւանովսկին եւ ես գնեցինք նժոյգներ եւ վարձեցինք վեց ջորեպանների, որպէսզի [նրանց] հետ տանենք ուղեբեռը: Վերջապէս Իւանովսկին իր մօտ ծառայ ընդունեց ծակամուտ[8] հայ

Ստեփանոսին, որ սահուն խօսում էր վրացերէն, հայերէն եւ թաթարերէն[9]: Քնեցինք բաց երկնքի տակ, քանի որ գիշերը տաք էր եւ հրաշալի: Գնացինք Դիլիջանի գեղեցիկ հովտով եւ կիրճով, որտեղ նոյնպէս գիշերեցինք բացօթեայ, աղբիւրի մօտ: Ամսի 8ին հասանք Պիպիս[10], եւ քանի որ անտանելի շոգ էր, ճանապարհ ընկանք միայն երեկոյեան: Նորից գնում էինք գեղատեսիլ լեռնային տեղանքով, Ակստաֆա[11] լեռնային գետի ուղղութեամբ, շեղուեցինք մեծ ճանապարհից՝ աւելի կարճ ճանապարհով լեռներ հասնելու համար, եւ Յուլիսի 10ին գիշերեցինք Էշէկ-Մայդանի[12] (Աւանակի հրապարակ) քոչուորների մօտ (էջ 87-88):

Ամսի 11ին հատեցինք Էրիւանի Նահանգի սահմանը եւ կիզիչ շոգի պատճառով դադար առանք քանդուած մզկիթում: Այստեղ մենք առաջին անգամ հիացանք փառահեղ Արարատի հրաշալի տեսարանով, որի կրկնակի գագաթը, պատուած կուրացնող ձիւնով, հարաւում բարձրանում էր հարթավայրի վրայ: Ամսի 13ին դժուարութեամբ անցանք վերջին լեռնաշղթայի վրայով եւ իջանք Արաքսի հովիտը: Օրը հրաշալի էր, երկինքն՝ անամպ: Տեղաւորուեցինք քչքչացող առուի մօտ գտնուող ծառերի տակ ու կրկին զմայլուեցինք Արարատի տեսքով, որն իր ողջ վեհութեամբ կախուած էր մեզ վրայ: Մեր հայը պատրաստեց հիանալի փլաւ, եւ մենք, գտնուելով ուրախ հոգեվիճակում, դատարկեցինք մադերայի շիշը: Երեկոյեան ճամփայ ընկանք եւ ամսի 17ի լուսաբացին հասանք Նախիջեւան, որտեղ, ըստ աւանդութեան, Նոյը տնկել էր առաջին խաղողի վազը[13] (էջ 88):

...Երեկոյեան ժամը 5ին վերջապէս հասանք Ջուլֆայի մաքրանոցը, սահմանային Արաքս Գետի ձախ ափին: ....Կէս ժամ հանգստանալով՝ մենք անցանք իր անցեալով եւ ներկայով յայտնի գետի վրայով, որը չի հանդուրժում կամուրջներ[14], եւ յայտնուեցինք պարսկական տարածքում, Ադրբեջան նահանգում[15] (էջ 89):

Թեհրանի ծայրամասեր կատարած մեր մի ուղեւորութեան ժամանակ կոմսն ինձ ցոյց տուեց մի տեղ քաղաքի խանդակի մօտ, Ղազուինի դարպասներից ոչ հեռու, որտեղ թաղուել էին 37 ռուսների մարմինները, որոնք զոհուել էին մեր դեսպանորդ Գրիբոյեդովի[16] սպանութեան ժամանակ, Թեհրանում, 1829ին: Երբ 1834ին կոմս Սիմոնիչը եկել է Թեհրան, նրանց աճիւններն իր աջակցութեամբ մութ գիշերով դուրս են հանուել եւ տեղափոխուել հայկական եկեղեցի, որտեղ երկրորդ անգամ թաղուել են օրհնուած հողում (էջ 99):

Ճամփորդական խմբի համար ունէի չորս ձի.... Ինձ հետ գնում էին ռուս սպասաւորը, որը նաեւ լուացարարն էր, հարկ եղած դէպքում՝ նաեւ խոհարարը, հայ ծառան (էջ 107):

[*Մեշհէդում*] Եղանք հրէական տանը եւ հրէական բաղնիքում, անցանք մութ միջանցքներով, որոնք մասամբ կազմում էին նեղ փողոցներ... Մեզ ասացին, որ Մեշհէդում հայեր չկան (էջ 144):

Վերոյիշեալ գումարտակը, կազմուած մօտ 500 հոգուց, որի կէսը լեհեր էին, ղեկավարում էր ոմն Սամսոն-խան: ....նա դասալիք էր դարձել 1807ի կոմս Գուդովիչի[17] կողմից Էրիւանի պաշարման ժամանակ եւ անցել ծառայութեան՝ պարսիկների մօտ: .....[*Գումարտակից*] Շատերն ամուսնացան հայուհիների եւ նեստորականուհիների հետ[18], կազմեցին ընտանիքներ, սակայն նրանցից ոչ մէկը չփոխեց հաւատը (էջ 150):

[*Կապիտան Ալբրանդը*[19]] ....բաժանեց գումարտակը վաշտերի եւ ջոկատների, որի ղեկավար դարձան այն նոյն սպաները, ֆելդֆեբէլները[20] եւ ենթասպաները, որոնք նախկինում մնացել էին պարսկական ծառայութեան մէջ: ....Կապիտան Ալբրանդը պայմանագրեր կնքեց միքանի հայերի հետ, որոնք պէտք է գումարտակին հետեւէին որպէս մատակարարներ եւ ամէն օր նրան մատակարարէին ոչխարի միս, հաց, բրինձ եւ օղի: ....Եւ երբ ամէն ինչ պատրաստ էր ցուցադրուելու, ռուս մինիստրն իր առաքելութեամբ եկաւ վերոյիշեալ քարուանսարայը.... Այստեղ արդէն գտնւում էր հայ ուղղափառ հոգեւորականն իր օգնականներով: Երգեցին «Առ Տէր»ը, յետոյ գումարտակի առջեւ կարճ ճառ արտասանեց գնդապետ Դիւգամէլը[21] (էջ 151-152):

Գլուխ Դ
1839 թուական

Գարունը մօտենում էր, եւ ռուս նախարարը որոշեց կապիտան Լեմմի հետ ուղարկել Խորասանի նահանգապետի համար (այն ժամանակ Ասիֆ օդ-Դոուլէն էր) պատրաստած նուէրները: ....Լեմմին ուղեկցեց հայ ծառան, որը կարողանում էր խօսել թիւրքերէն (թաթարերէն): (էջ 155):

[*Նեմեհրէմի բացառութիւնների մասին*] Սակայն կան բացառութիւններ՝ 1) չպէտք է դէմքը թաքցնել գեղեցիկ երիտասարդից, քանի դեռ նրա մօրուքը չի աճել, 2) արտօնութիւններից օգտւում եւ որպէս մեհրէմ են դիտւում երիտասարդ ամուսինները, հայերը, հրեաները, յատկապէս երաժիշտները.... (էջ 178):

Գլուխ Ե
1840 թուական

Մարտի 12ին հեռացանք Գէօզից: Լայն ճանապարհը Սպահանից ձգւում էր գրեթէ մինչեւ հին քաղաքի սահմանը, աղուտային հարթավայրով: Ճանապարհի կէսին մեզ սպասում էր պատուարժան հայր Ջովաննին, կաթոլիկ հայ հոգեւորական[22] միսիոնէրը, որը հոգիների հովիւ էր Ջուլֆայի փոքր կաթոլիկ համայնքում եւ իր հիւրասիրութեամբ ճանաչուած էր բոլոր արտասահմանցիների շրջանում (էջ 187):

Ջուլֆան հայկական գաղութ է, որն Աբբաս Մեծը տեղափոխել է այստեղ Արաքսի ձախ ափից: Նա ցանկացել է իր եւ թուրքական շրջանների միջեւ անապատ թողնել եւ այդ պատճառով էլ աւերել է

հայկական հարուստ Ջուլֆա քաղաքը, իսկ ողջ մնացած բնակիչներին (մօտ 30 հազար հոգու) գաղթեցրեց, ինչպէս պատմում են, Զայէնդերուդի աջ ափ, որտեղ նրանք կառուցել են մի նոր քաղաք հին անունով: Շուտով այստեղի հայերն իրենց արհեստների եւ Հնդկաստանի հետ ունեցած առեւտրի շնորհիւ հարստացան, եւ Աբբասը նրանց մեծ արտօնութիւններ շնորհեց: Այդ ժամանակ Հնդկաստանից բոլոր ապրանքները Ղանդահարի, Սպահանի, Բաղդադի ճանապարհով ուղարկւում էին Զմիւռնիա եւ Կոստանդնուպոլիս, իսկ Պարսկաստանի մայրաքաղաքը եղել է այդ վիթխարի առեւտրի գլխաւոր կենտրոնը: Ջուլֆայում ապրել են Պորտուգալիայի, Հոլանդիայի եւ այլ երկրների հիւպատոսները: Նրանք իրենց համար կառուցել են շքեղ տներ՝ ջրաւազաններով, այգիներով եւ զարդարել արեւելեան ճոխութեամբ: Ջուլֆայի փողոցների երկու կողմերում ծառեր են տնկուել: Դրանց երկարութեամբ գցուել են ջրանցքներ թարմ, մաքուր ջրով (էջ 187):

...Մարտի 13ին, այսինքն՝ Ջուլֆա հասնելուց յետոյ, կայսերական առաքելութեան անդամներից իւրաքանչիւրն իր համար փնտռեց մասնաւոր բնակարան, որը կարելի է հեշտօրէն վարձել հայերից: Ես տեղաւորուեցի մինիստրի վերոյիշեալ տնից ոչ հեռու, մի կաթոլիկ հայի մօտ... եւ զբաղեցրի վերին, աւելի ընդարձակ սենեակը, պատշգամբով եւ գրասենեակով, որտեղ յարմարաւէտ տեղաւորուեցի (էջ 188):

Մարտի 14ին տօնական հագուստներով այցելեցինք շահին եւ առաջին մինիստրին... Այնուհետեւ եղայ մաքուր հայկական բաղնիքում, որտեղ վրայիցս լուացի տասնչորսօրեայ ճանապարհի փոշին, ինչպէս նաեւ ինձ մերսել տուեցի պարսկական եղանակով (էջ 188):

Կիրակի օրը, Մարտի 17ին, մեզ պատասխան այց կատարեց առաջին մինիստր Միրզա Հաջի-Աղասին[23]: Մեզ այցելեց նաեւ Մանուչար խանը[24]՝ Սպահանի նահանգի եւ քաղաքի այն ժամանակուայ նահանգապետը: Ծագումով հայ՝ նա երիտասարդ տարիներին գերի է եղել Վրաստանում եւ ամորձատուել է, բայց յետագայում բարձրացել է մինչեւ խանի աստիճանի: Մանուչար խանն օժտուած էր մեծ խելքով եւ եռանդով: Նրանից վախենում եւ յարգում էին նրա բոլոր ստորադասները եւ ժողովուրդը: Նրա առջեւ յատկապէս դողում էին Սպահանի «լութերը»՝ մի տեսակ ստահակները (էջ 190):

Այդ այցից յետոյ գնդապետ Դիւգամէլը կնոջ հետ գնաց ժամերգութեան, որն իր հայկական եկեղեցում մատուցում էր հայր Ջովաննին: Եկեղեցին դատարկ էր, քանի որ հայերը յաճախում էին միայն առաւօտեան ժամերգութեան: Վերադարձի ճանապարհին անցանք Ջուլֆայի փողոցներով: Դռներից նայում էին կանայք եւ աղջիկներ, որոնք հետաքրքրութեամբ նայում էին ֆերինգներին[25] եւ յատկապէս խանումին (մինիստրի կնոջը): Հայերը գեղեցիկ ժողովուրդ են, եւ նրանց կանայք ու աղջիկները Արեւելքում փառաբանուած են իրենց գեղեցկութեամբ:

Բնութիւնը նրանց օժտել է դէմքի թարմ գոյնով, սեւ, կրքոտ նշաձեւ աչքերով, հրաշալի ճերմակ ատամներով, փարթամ սեւ մազերով: Միայն նրանց քթերը մի փոքր մեծոտ են: Ընդ որում, կանայք մեր աչքին անճոռնի են երեւում՝ դէմքի ստորին մասը մինչեւ քթի ծայրը սպիտակ բամբակեայ կտորով ծածկելու տգեղ սովորոյթի պատճառով, այնպէս որ չեն երեւում ո՛չ դունչը, ո՛չ բերանը, ո՛չ ատամները. իրենց աւանդոյթով այլ կերպ վարուելն անպատշաճ է: Նրանք ստեղծուած են ամբողջովին տան եւ ընտանիքի համար, խիստ չափաւոր են ուտելու մէջ, եւ նրանց պահելը բաւական էժան է նստում: Դրա հետ մէկտեղ, նրանք սիրում են, ինչպէս Եւայի բոլոր դուստրերը, գեղեցիկ մետաքսեայ հագուստներ ու զարդեր եւ շատ հպարտանում են հարուստ հանդերձներով (էջ 190):

Քանի որ մեր ընդհանուր ընկեր զօրավար Սեմինօն[26] այրի էր եւ ապրում էր մէնակ, նա օգտուեց պարսկական սովորոյթից եւ Ջուլֆայում ժամանակաւորապէս կնութեան առաւ մի երիտասարդ հայուհու: Այդ սովորոյթն այստեղ պատշաճ է համարւում, քանի որ ուխտաւորները, որոնք ուխտագնացութիւն են կատարում, օրինակ, Մեշհէդ, այստեղ ամուսնանում են չորս շաբաթով, երկու շաբաթով, ութ օրով եւ անգամ՝ մէկ օրով: Այդ սովորոյթը, որ կոչւում է սիգէ-խան, լայնօրէն տարածուած է Պարսկաստանում եւ Դաղստանում: Միայն թէ ժամանակաւոր կապի համար հայկական աւանդոյթով պարտադիր է ամուսնութեան արարողութիւնը: Հրաւիրւում է հոգեւորականը, նա աղօթք է անում, այնուհետեւ երիտասարդ զոյգին տալիս է մի գաւաթ գինի, որը նրանք պիտի միասին դատարկեն, եւ գործն աւարտւում է (էջ 192-193):

Պարսկական ծառայութեան մէջ գտնուող անգլիացի սպաները եւ միւս արտասահմանցիները.... Պարսկաստան հասնելուց յետոյ շուտով կապի մէջ են մտնում հայուհիների կամ նեստորականուհիների հետ, որպէսզի չապրեն մէնութեան մէջ եւ աւելի արագ սովորեն երկրի լեզուն: Կասկածի ենթակայ չէ, որ դրա համար լաւագոյն ուսուցիչը գեղեցիկ աղջիկը կամ երիտասարդ կինն է, որն ամէն օր գտնւում է ձեր կողքին: Ճիշտ է, եւրոպացիների հասկացողութեամբ այդպիսի կապը համարւում է անբարոյական.... Արեւելքում դրա վրայ ամէնից քիչ ուշադրութիւն են դարձնում, քանի որ այնտեղ ոչ ոք ամուրի կեանք չի վարում.... Պարսկաստանում չես հանդիպի քսան տարեկանից բարձր հարսնացու մնացած աղջիկ, եթէ, իհարկէ, նա այլանդակ չէ: Նման աղջիկները, բնականաբար, կրթութիւն չունեն: Նրանք պարզապէս բնութեան զաւակներ են, մի փոքր միամիտ: Փոխարէնը նրանք ծաղկուն տեսք ունեն, շատ համեստ են, նուրբ, օժտուած են ուրախ բնոյթով եւ մեծ կապուածութիւն ու հաւատարմութիւն են ցուցաբերում իրենց պաշտպանների հանդէպ (էջ 193):

Յուլիսի 10ին փոստային (կառքով) մեկնեցի Ջուլֆայից եւ նոյն օրն էլ հասայ Նախիջեւան, որը կիսաքանդ էր՝ այստեղ միքանի օր տեղի

ունեցած ուժեղ երկրաշարժից, որի հետքերը տեսանելի էին մինչեւ Թաւրիզ: Աւերածութիւնները, որ հասցրել էր երկրաշարժը Արաքսի ձախ ափին, սարսափելի էին: Փոստային ճանապարհի երկարութեամբ ձգուող գրեթէ բոլոր գիւղական տներն աւերուած էին կամ ճաքեր տուած: Վեհաշուք Արարատի գագաթից ոչ-հեռու տեղի էր ունեցել հրէշաւոր լեռնային փլուզում: Ներքեւ գահավիժած ձեան զանգուածը հալուել է արեւի տակ՝ վերածուելով կատաղի հոսանքների: Ջրասոյզ է եղել եւ երկրի երեսից ջնջուել միքանի հարիւր տուն ունեցող հայկական մի գիւղ[27]: Ձեան հոսքը ծածկել է բնակիչներին, տները եւ այգիները: Ոչ ոք չի փրկուել, քանի որ դժբախտութիւնը վրայ է հասել յանկարծակի: Նախիջեւանի ոստիկանապետը, որն ինձ այցելեց, սարսափելի մանրամասներ պատմեց աղէտի մասին (էջ 195):

Յուլիսի 11ին, լաւ եղանակով գնացի երկրաշարժից ամբողջովին աւերուած փոստակայանները: Հարկադրուեցի գիշերել բացօթեայ, քանի որ բոլոր փոտակայաններն աւերուած էին: Արաքսի հովտով իմ երէկուայ ուղեւորութեան ժամանակ աչքիս առաջ մշտապէս վեհաշուք Արարատն էր իր երկու ձիւնէ գագաթներով, եւ ես հիանում էի այդ լեռնային աժդահայի տեսարանով: Քանի՜ հազարամեակ է անցել եւ քանի՜ սերունդ է փոխուել այն ժամանակներից, երբ, համաձայն առասպելի, Նոյը տնկել է առաջին խաղողի վազը այս կողմերում (էջ 195):

Յուլիսի 12ին, ուշ երեկոյեան, տանջահար հասայ Արդաշար[28] փոստակայանը, որն առաջինն էր փրկուել երկրաշարժից յետոյ: Յուլիսի 13ին ուղեւորուեցի բազմաթիւ ձորակներով կտրտուած եւ հիանալի ոռոգման համակարգով օժտուած լաւ մշակուած տեղանքով եւ ժամը 9ին հասայ հին Էրիւան: Մնացի կովկասեան զինակից, պարէտ իշխան Սումբատովի մօտ, որն ապրում էր Էրիւանի սարդարի նախկին հրաշալի պալատում: Իշխանի մօտ ճաշից յետոյ ուղեւորուեցի Էջմիածնի նշանաւոր վանքը, որն այնքան յաճախ են նկարագրում ճանապարհորդները, եւ յետոյ ուղեւորուեցի Թիֆլիս, ոչ թէ ձիով, այլ փոստայինով (այսինքն կառքով – Ա.Բ.): Սպահանից Էրիւան ձիով անցել էի աւելի քան 1200 վերստ: [Երեւան-Թիֆլիս] Ճանապարհն անցնում էր Ախտիով[29], Գոքչա Լճի[30] կողքով: Այստեղ իմ բարեկամ ճարտարագէտ-գնդապետ Միշէլ Էսպէժօն[31] ժայռերի վրայ, ջրին շատ մօտ կառուցել է մի հրաշալի խճուղի, որից սքանչելի տեսարան է բացւում ուղիղ լճի եւ մօտակայ լեռների վրայ: Գոքչա Լճից, որը կոչւում է նաեւ Սեւան, ճանապարհը հիւսիս Չուբուքլիով[32], Դիլիջանի *ռոմանտիկ* հովիտով անցնում էր դէպի Թիֆլիս (էջ 195-196):

Գլուխ Զ
1841 թուական

(Բլարամբերգը 15 տարի՝ 1841-1856, բնակուել է Ռուսաստանի Օրենբուրգի մարզում, որի հայ բնակիչների մասին եւս թռուցիկ յիշատակել է իր յուշագրքում – Ա.Բ.):

Այս տափաստանային տարածութեան մէջտեղում ձգւում են աւազաբլուրներ, որոնք կոչւում են Ռին-պեսկի[33]: Նախկինում այստեղ ապրում էր հանգուցեալ խան Ջանգիր-Բուկէյը[34], իսկ հիմա՝ ներկայ վարչակազմը: Այստեղ կայ ընդամէնը 50 տուն, որոնցում ապրում են ռուսներ եւ հայ վաճառականներ, որոնք մանր առեւտրով են զբաղուած ղրղզների հետ (էջ 215):

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Erinnenrungen aus dem Leben des Keiserlich Russishen General-Lieutenant Johann von Blaramberg* (Յիշողութիւններ կայսերական Ռուսաստանի զօրահրամանատար Եոհան ֆոն Բլարամբերգի կեանքից), Պերլին, 1872:

[2] Թարգմանութիւնը կատարուած է Բլարամբերգի գրքի ռուսերէն համառօտ թարգմանութիւնից՝ Иоганн Бларамберг, *Воспоминания* (Յիշողութիւններ), գերմաներէնից թարգմ.՝ Օ.Ի. Ժիգալինա եւ Է.Ֆ. Շմիդտ, Մոսկուա, Արեւելեան Գրականութեան Գլխաւոր Խմբագրութիւն, 1978: Մէջբերումներն այս հատորից են:

[3] Բլարամբերգից առաջ Աստրախանի հայուհիների գեղեցկութեան մասին յիշատակել եւ հայկական պարեր է նկարագրել մէկ այլ ռուս պաշտօնեայ՝ Ն. Նեֆեդեւը, 1820ականների վերջին՝ իր տպագրած թղթակցութեան մէջ (Н. Нефедьев, "Армянская Свадьба (Письмо к гр-ну Д-ну, из Астрахани от 14 апр. 1827 г." [Հայկական հարսանիք (նամակ քաղաքացի Դ-ին Աստրախանից, 14 Ապրիլ, 1827), *Вестник Европы* (Եւրոպայի լրաբեր)], 1828, թիւ 3, էջ 307-14, (К. Н. Григорьян, *Армения в Русской Литературе и Живописи XVIII–первая Половина XIX Века* [Հայաստանը ռուս գրականութեան մէջ եւ կերպարուեստում, ԺԸ.-ԺԹ. դարի առաջին կէս], Երեւան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1962, էջ 56-57):

[4] Բլարամբերգի 1830ականների այս վկայութիւնը, թէ՝ պարահանդէսին կատարուել են նաեւ հայկական պարեր, խիստ ուշագրաւ է, քանի որ հայկական պարերը քաղաքային (մանաւանդ հայ միջավայրից հեռու) միջավայրում, այն էլ՝ գաղթավայրում, խիստ հազուադէպ էին:

[5] Գետ Հիւսիսային Կովկասում:

[6] Քաղաք Թերէք գետի ափին, այժմ՝ Ռուսաստանի Դաշնութեան Հիւսիսային Օսիայի Հանրապետութիւն, Ալանիայի Մոզդոկի շրջանի վարչական կենտրոնը:

[7] Երկարութեան ռուսական հին չափ, հաւասար է 1,06 կմ.ի:

[8] Այսինքն՝ աւելորդ հետաքրքրութիւն ունեցող:

[9] Նկատի ունի Կովկասի թուրքերէնը:

[10] Գիւղ Ելիզաւէտպոլի նահանգի Ղազախի գաւառում, այժմ՝ Բերքաբեր, ՀՀ Տաւուշի մարզում:

[11] Աղստեւ:

[12] Լեռ Փոքր Կովկաս լեռնահամակարգում, Փամբակի լեռնաշղթայում:

[13] Այս աւանդութեան վերջին վկայողը ծնունդով Նախիջեւանի Ազնաբերդ գիւղից ազգագրագէտ Արտակ Վարդանեանն է, որի գրառած աւանդազրոյցի համաձայն, Ազնաբերդի արեւմտեան բլուրներից հարեւան գիւղը տանող ճանապարհին գտնուող հինաւուրց աղբիւրը կառուցել է Նոյի աւագ որդի Սէմը, եւ այս աղբիւրի ջրով էլ Նոյը ջրել է իր տնկած որթատունկերն ու աճեցրել առաջին խաղողի այգին (Արտակ Վարդանեան, «Հաստատում են Նաեւ Աւանդազրոյցները», *Հայաստանի Հանրապետութիւն*, 5 Սեպտեմբեր 2014):

[14] «Կամուրջներ չհանդուրժող Արաքս» (pontem indignatus Araxes) արտայայտութիւնը պատկանում է հռոմէացի բանաստեղծ Վերգիլիոսին (Ք.ա. 74–19):

[15] Նկատի ունի Իրանի հիւսիսային մասը:

[16] Ալեքսանդր Գրիբոյէդով (1795, Մոսկուա–1829, Թեհրան), ռուս թատերագիր, բանաստեղծ, դիւանագէտ:

[17] Իւան Գուդովիչ (1741–1820), ռուս ռազմական գործիչ, կոմս:

[18] Նկատի ունի ասորիներին:

[19] Լեւ Ալբրանդ (1804–49), ռուս զօրավար, 1817-64՝ կովկասեան պատերազմի գործիչ:

[20] Գերմաներէն՝ Feldwebel. ռազմական կոչում Ռուսաստանի զինուած ուժերում (մինչեւ 1917ը) եւ եւրոպական միքանի երկրներում:

[21] Ալեքսանդր Դիւգամէլ (1801–80), ռուս զօրավար:

[22] Ինքնութիւնն անյայտ է:

[23] Միրզա Հաջի-Աղասի (1783–1848), Իրանի վարչապետ (վեզիր):

[24] Մանուչար խան Մոթամէդօլդոլէի, Մամիկոնեան-Ենիկոլոպեան տոհմից:

[25] Այսինքն՝ ֆրանկ, եւրոպացի:

[26] Բարթելեմի Սեմինօ (1797–1852), ֆրանսիացի զօրավար (հօր կողմից սարդինացի), ճարտարագէտ եւ լեզուաբան, ծառայել է ղաջարների մօտ Պարսկաստանում:

[27] Մեծ Մասիսի շրջանում տեղի ունեցած 2 Յուլիս 1840ի երկրաշարժի հետեւանքով Ակոռի գիւղը թաղուել է ժայռաբեկորների հաստ շերտի տակ:

[28] Կամ՝ Արտաշար, գիւղ Երեւանի Նահանգի Էջմիածնի գաւառում:

[29] Հաւանաբար նկատի ունի Ախտան՝ Հրազդանը:

[30] Սեւանայ լիճը:

[31] Տուեալներ չգտանք Հայաստանում դեռեւս ԺԹ. դարում ճանապարհաշինութեամբ զբաղուած այդ ֆրանսիացի ճարտարագէտի մասին:

[32] Կամ՝ Չիբուխլու, գիւղ Սեւանի ափին, այժմ՝ Ծովագիւղ:

[33] Կոչուել է նաեւ Նառըն-Պեսկի կամ Նառըն, անապատային տարածութիւն անդրկասպեան ցածրավայրերում:

[34] Ջանգիր-խան Բուկէեւ, Բուկէեւեան խանութեան (այսպէս կոչուած՝ Ներքին Հորդա) խանը 1823ից:

JOHANN BLARAMBERG'S ACCOUNTS OF THE ARMENIANS (1836-1841)
(Summary)

ARTSVI BAKHCHINYAN
artsvi@yahoo.com

The Russian lieutenant general Johann Von Blaramberg (Ivan Fedorovich Blaramberg, 1800-1878), a German of Dutch origin, traveled to southern Russia, Persia and Central Asia between 1836 and 1840 as well as between 1841 and 1855. His travels took him to parts of Eastern Armenia, which were then part of the Russian Empire. During his travels Blaremberg encountered Armenians in various cities of Russia (Orenburg, Astrakhan, Mozdok, etc.) and Persia (Julfa). In his memoires, Blaremberg expresses his views on the beauty of Armenian women and children, the miraculous view of Mount Ararat, and notes that a number of foreign officers had married Armenian women in Persia. Like many Christian travelers, Blaramberg slept in Armenian homes, feeling more secure there than elsewhere.

The paper is a translation of all the passages of Blaremberg's memoires which touch upon Armenians as well as Armenian-related issues.